Նշի սննդային արժեքը բարձր է. 100 գ սերմի կալորիականությունը կազմում է 579 կկալ: Ուշագրավ է, որ սերմերը պարունակում են B1 (0,21 մգ), B2 (1,14 մգ), B3 (3,6 մգ), B5 (0,47 մգ), B6 (0,14 մգ), B9 (44 մկգ), E (25,6 մգ) վիտամիններ, երկաթ (3,7 մգ), կալցիում (269

մգ), սելեն (4,1 մկգ), մոլիբդեն (45,3 մկգ), մագնեզիում (270 մգ), ֆոսֆոր (481 մգ), կալիում (733 մգ), եթերային յուղեր (4,7 %), սպիտակուցներ (21,15 գ), ճարպեր (49,93 գ), կարբոհիդրատներ (21,55 գ), թաղանթանյութ (12,5 գ), շաքարներ (4,35 գ) ([www.medicalnewstoday.com](http://www.medicalnewstoday.com), [www.vegnt.com](http://www.vegnt.com)):

Նշենու սերմերը սննդային բարձր արժեքի և քիմիական բաղադրության շնորհիվ լայնորեն կիրառվում են հրուշակեղենի, կոսմետիկ միջոցների արտադրությունում, ինչպես նաև բժշկության բնագավառում:

2020 թվականին աշխարհում նշի արտադրությունը կազմել է 4,1 մլն տոննա: Նուշ արտադրող առաջատար երկիրը Ամերիկայի Միացյալ Նահանգներն է, որն ապահովում է նշի համաշխարհային արտադրության 57 %-ը: Հարկ է նշել, որ նշենու մշակությամբ զբաղվող 10 առաջատար երկրներն են ԱՄՆ-ն՝ 2370 հազ. տ, Իսպանիան՝ 417, Ավստրալիան՝ 222, Իրանը՝ 164, Թուրքիան՝ 159, Մարոկկոն՝ 134, Սաուդյան Արաբիան՝ 123, Իտալիան՝ 81, Թունիսը՝ 62, և Ալժիրը՝ 61 հազ. տ ([www.scienceagri.com](http://www.scienceagri.com)):

Հայաստանում նշենու արտադրական մշակությամբ սկսել են զբաղվել վերջին տարիներին: Մշակության ընթացքում լուրջ խնդիր են ներկայացնում վնասակար օրգանիզմները, որոնց տեսակային կազմը հանրապետությունում դեռևս ուսումնասիրված չէ, մասնավորապես այդ ուղղությամբ հետազոտական աշխատանքներ չեն իրականացվել:

### Նյութը և մեթոդները

Հետազոտության նպատակն է ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի պայմաններում ուսումնասիրել նշենու հիվանդությունների տեսակային կազմը:

Որպես ուսումնասիրության նյութ ընտրվել են նշենու՝ իսպանական ծագման Պենտա, Գուարա, Լորան սորտերը: Հիվանդությունների բացահայտման նպատակով իրականացվել են դաշտային և լաբորատոր հետազոտություններ:

Հիվանդությունների հայտնաբերման հաճախականությունը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$P = \frac{n \cdot 100 \%}{N},$$

որտեղ  $P$ -ն հիվանդության հայտնաբերման հաճախականությունն է կամ տարածվածությունը՝ արտահայտված տոկոսներով,  $n$ -ը՝ հիվանդ բույսերի (ծառերի) կամ օրգանների թիվը,  $N$ -ը՝ հետազոտված բոլոր բույսերի (ծառերի) կամ օրգանների թիվը:

Նշենու կորիզավոր ծառատեսակների ծակոտկեն բծավորությամբ վարակվածության ինտենսիվությունը գնահատվել է հինգ բալային սանդղակով.

- 0 բալ՝ վարակը բացակայում է,
- 1 բալ՝ վարակված է տերևի մակերեսի մինչև 10 %-ը,
- 2 բալ՝ վարակված է տերևի մակերեսի 10,1-25 %-ը,
- 3 բալ՝ վարակված է տերևի մակերեսի 25,1-50 %-ը,
- 4 բալ՝ վարակված է տերևի մակերեսի 50,1-100 %-ը (Մ.Ս. Դեմենտևա, 1985):

Ցիտոսպորոզով վարակվածության ինտենսիվությունը գնահատվել է 6 բալային սանդղակով.

- 0 բալ՝ վարակի բացակայություն,
- 1 բալ՝ եզակի մակերեսային բծեր ծառերի բնի և ճյուղերի վրա,
- 2 բալ՝ խորացող, ճաքճաք, խեժահոսող բծեր ծառերի բնի և ճյուղերի վրա,

3 բալ՝ ծառերի բունը և ճյուղերը գրեթե օղակող խոշոր բծեր, խեժահոսություն,

4 բալ՝ ծառերի վրա մի բանի չորացած ճյուղերի առկայություն,

5 բալ՝ ծառի չորացում, մահացում ([www.studfile.net](http://www.studfile.net)):

Քլորոզի և նշենու տերևների այրվածք (*Xylella fastidiosa* Wells et al.) հիվանդության ինտենսիվությունը գնահատվել է ըստ պտղատուների բակտերիալ այրվածքի ինտենսիվության գնահատման չորս բալային սանդղակի.

- 0 բալ՝ առողջ ծառեր,
- 1 բալ՝ հիվանդ են ծառի եզակի շիվեր,
- 2 բալ՝ հիվանդ է ծառի շիվերի 1/5-ը,
- 3 բալ՝ հիվանդ է ծառի շիվերի 1/3-ը կամ ավելին (Տ.Մ. Դոբրոշրակովա, 1974):

Հիվանդությունների զարգացման աստիճանը որոշվել է հետևյալ բանաձևով.

$$R = \frac{\sum ab \cdot 100 \%}{Nk},$$

որտեղ  $R$ -ը հիվանդության զարգացումն է՝ արտահայտված տոկոսներով,  $\sum ab$ -ն՝ հիվանդ օրգանների (ծառերի) թվի ( $a$ ) և առանձին օրգանների վարակվածության բալի ( $b$ ) արտադրյալի միագումարը,  $N$ -ը՝ հաշվառման ենթարկված բոլոր օրգանների (ծառերի) թիվը,  $k$ -ն՝ ամենաբարձր բալը հաշվարկային սանդղակում,  $k=4$  (Մ.Ս. Դեմենտևա, 1985):

Իսպանիայում գործող *Green Biotechnology-Valgenetics* լաբորատորիայում կատարվել է գոմոզով ախտահարված հյուսվածքների ինկուբացում Պետրիի թասերում PDAS, DRBC և CMA-PARPH ագարային սննդամիջավայրերում 26 °C պայմաններում, 7 օր տևողությամբ: Աճած սնկային և բակտերիալ գաղութները մեկուսացվել են, կատարվել են վերացանքս և 26 °C ջերմաստիճանում սնկերի ինկուբացում 7 օր տևողությամբ: Մեկուսացված գաղութներից կատարվել է ԴՆԹ-ի էքստրակցիա, որից հետո ԴՆԹ-ն ենթարկվել է ամպլիֆիկացման և սեքվենավորման: Այնուհետև կատարվել է նույնականացում ([www.blog.praxilabs.com](http://www.blog.praxilabs.com)):

Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքը գտնվում է ծովի մակերևույթից միջինը 1025 մ բարձրության վրա՝ կիսաանապատային չոր կլիմայական գոտում: Համայնքային հողերի գերակշիռ մասի մեխանիկական կազմը թեթև ավազակավայինից միջին կավավազային է, հումուսի պարունակությունը՝ ցածր, աղերից՝ նորմայի սահմաններում, իսկ հողի ռեակցիան հիմնային է՝ 8,6: Բացի այդ՝ ազոտի պարունակությունը նորմայից ցածր է 6, ֆոսֆորինը՝ 4, իսկ կալիումինը՝ 1,8 անգամ: Հետևաբար նշենու արդյունավետ մշակություն հնարավոր է իրականացնել միայն համալիր պարարտացման դեպքում:

### Արդյունքները և վերլուծությունը

2021 և 2022 թթ. ՀՀ Արմավիրի մարզի Երվանդաշատ համայնքի նշենու այգում հիվանդությունների տեսակային

կազմը և տարբեր սորտերի ծառերի վարակվածությունը բացահայտելու նպատակով վեգետացիոն շրջանում իրականացվել են հետազոտություններ:

2021 թ. հոկտեմբերին նշենու այգում Գուարա սորտի ծառերի վրա հայտնաբերվել են կորիզավոր ծառատեսակների ծակոտկեն բծավորություն, գոմոզ և նշենու փրփրանման քաղցկեղ (*Zymomonas Khuyver and van Niel*), իսկ Պենտա սորտի ծառերի վրա՝ գոմոզ և նշենու փրփրանման քաղցկեղ հիվանդությունները:

Կորիզավոր ծառատեսակների ծակոտկեն բծավորությամբ վարակվում են կորիզավոր պտղատու բոլոր ծառատեսակները (բալենի, կեռասենի, նշենի, ծիրանենի և այլն): Յարուզիչը *Stigmina carpophila (Le'v.) M.B. Ellis* սուևկն է, որն ախտահարում է ծառերի ծաղիկները, բողբոջները, տերևները, շիվերը և պտուղները: Վարակված տերևների վրա առաջանում են օվալաձև կամ կլորավուն կարմիր կամ շագանակագույն բծեր, որոնց կենտրոնական մասն արագ չորանում է, թափվում տերևներին տալով ծակոտկեն տեսք: Նշենու պտուղների վրա հիվանդությունն արտահայտվում է մի քանի միլիմետր մեծությամբ մակերեսային, կլորավուն բծերի տեսքով, որոնց կենտրոնական մասը դառնում է մոխրագույն, ուռուցիկ, խցանանման: Բծերը երբեմն միաձուլվում են՝ պատելով պտղի զգալի մասը (Ա. Ասատրյան, Գ. Ավագյան, 2022):

Գոմոզով (խեժահոսություն) վարակվում են ծիրանենին, դեղձենին, սալորենին, կեռասենին, բալենին, ինչպես նաև նշենին: Այն լինում է վարակիչ և ոչ վարակիչ, ընդ որում կարող է առաջանալ անբարենպաստ տարբեր գործոնների (ցրտահարություն, արևային այրվածք, վնասատուների վնասվածք, հողի շատ բարձր կամ խիստ ցածր խոնավություն և այլն) ազդեցությամբ ([www.old.minagro.am](http://www.old.minagro.am)):

Վարակիչ գոմոզն առաջանում է տարբեր հիվանդություններով (կորիզավորների ծակոտկեն բծավորություն, ցիտոսպորոզ, պտղատուների բակտերիալ քաղցկեղ և այլն) վարակման հետևանքով: Յիվանդությանը բնորոշ է բների, շիվերի խեժահոսումը. խեժը կպչուն, սաթագույն կամ դեղնակարմրագույն քաղցրահամ զանգված

է, առաջանում է վարակված հյուսվածքի բջիջների դեգեներացման արդյունքում:

Նշենու փրփրանման քաղցկեղը բակտերիալ հիվանդություն է (Ա. Ասատրյան, Գ. Ավագյան, 2022, [www.thealmonddoctor.com](http://www.thealmonddoctor.com)), որն արտահայտվում է վարակված ծառերի բնից կարմիր փրփրանման խեժի առատ հոսքով և հողի վրա կուտակումով (նկ. 1): 2022 թ. նշենու այգում փրփրանման քաղցկեղի ախտանշաններ չեն հայտնաբերվել, քանի որ 2021-ի աշնանը վարակված բոլոր ծառերն արմատախիլ էին արվել և այրվել:

2022 թ. ապրիլի երրորդ տասնօրյակում նշենու Գուարա սորտի ծառերի վրա հայտնաբերվել են կորիզավորների ծակոտկեն բծավորություն հիվանդության ախտանշաններ, իսկ Պենտա սորտի ծառերի վրա՝ քլորոզ: Մայիսի երկրորդ տասնօրյակում Գուարա սորտի ծառերի վրա հայտնաբերվել են կորիզավորների ծակոտկեն բծավորության, գոմոզի, Պենտա սորտի ծառերի վրա՝ գոմոզի և քլորոզի ախտանշաններ:

Քլորոզը տերևի հյուսվածքի դեղնումն է, ինչը պայմանավորված է հողում սննդանյութերի պակասով, հիմնային ռեակցիայով, վատ դրենաժով: Ախտահարումը սկսվում է տերևների միջջղային հյուսվածքի գունատությամբ, այնուհետև հյուսվածքը ստանում է դեղին գույն: Որոշ դեպքերում բույսի միայն մի մասն է դառնում քլորոտիկ: Ծանր և քրոնիկ քլորոզի դեպքում տերևի շղերը դեղնում են, տերևը կարող է ամբողջովին չորանալ, իսկ ավելի ուշ կարող են չորանալ նաև շիվերն ու ամբողջ ծառը: Քլորոզի առաջացման հիմնական պատճառը հողում երկաթի սակավությունն է: Վերջինս առավել հաճախ արտահայտվում է երիտասարդ տերևների վրա: Երկաթը մատչելի չէ ծառերի համար, երբ հողի pH-ը հիմնային է, այսինքն՝ 6,5-ից բարձր ([www.web.extension.illinois.edu](http://www.web.extension.illinois.edu)):

Յունիսի երկրորդ տասնօրյակում նշենու Գուարա սորտի ծառերի վրա հայտնաբերվել են կորիզավոր ծառատեսակների ծակոտկեն բծավորություն (նկ. 2) և գոմոզ (նկ. 3), իսկ Պենտա սորտի ծառերի վրա՝ գոմոզ և քլորոզ (ոչ վարակիչ) հիվանդությունները (գծ.):




Նկ. 1. Փրփրանման քաղցկեղ հիվանդության ախտանշաններով նշենի ([www.thealmonddoctor.com](http://www.thealmonddoctor.com)):



Նկ. 2. Կորիզավորների ծակոտկեն բծավորության ախտանշաններ:

Նկ. 3. Նշենու բնի վրա գոմոզ հիվանդության ախտանշաններ:

Գուարա սորտի ծառերի վրա կորիզավորների ծակոտկեն բծավորության հայտնաբերման հաճախականությունը կազմել է 68,6, իսկ զարգացման աստիճանը՝ 22,6 %: Գոմոգի հայտնաբերման հաճախականությունը տատանվել է 4,3-7,1 % սահմանում, իսկ քլորոզով հիվանդ է եղել Պենտա սորտի հաշվարկային թվով ծառերի 2,9 %-ը:



ՊՃ. Լշենու հիվանդությունների հայտնաբերման հաճախականությունը և զարգացման աստիճանը 2022 թ. հունիսի երկրորդ տասնօրյակում (կազմվել է հեղինակների կողմից):



Նկ. 4. Լշենու տերևների այրվածք հիվանդության ախտանշանները Պենտա սորտի ծառի տերևների վրա:

Լշենու Լորան սորտի ծառերի վրա որևէ հիվանդություն չի հայտնաբերվել:

Քլորոզի դեմ պայքարի նպատակով կիրառվել է Rexolin Q40 տերևային մնուցման պարարտանյութը՝ 15 օր ընդմիջումով ծառերի կրկնակի արտարմատային մնուցմամբ, ծախսի նորման՝ 1 գ/լ: Rexolin Q40-ը երկաթի խելատ է՝ EDDHA (6 %), հանքային պարարտանյութ, որը հատկապես հիմնային ռեակցիայով հողերում երկաթի սակավության և քլորոզի դեմ պայքարում ապահովում է կենսաբանական բարձր արդյունավետություն. կիրառվում է ինչպես բաց, այնպես էլ ծածկած գրունտում՝ արմատային և արտարմատային մնուցմամբ ([www.kosagro.kz](http://www.kosagro.kz)):

Չուլիսի երկրորդ տասնօրյակում Լշենու Պենտա սորտի ծառերի վրա նկատվել են գոմոգ և Լշենու տերևների այրվածք (Նկ. 4) հիվանդությունները, իսկ Գուարա սորտի ծառերի վրա՝ կորիզավորների ծակոտկեն բծավորություն և գոմոգ: Լորան սորտի ծառերի վրա որևէ հիվանդություն չի հայտնաբերվել:

Լշենու տերևների այրվածքի հարուցիչը *Xylella fastidiosa* Wells et al. բակտերիան է: Վարակվում են Լշենին, դեղձենին, սալորենին, ծիրանենին, կեռասենին և այլ ծառատեսակներ: Հիվանդությունն արտահայտվում է տերևների եզրային այրվածքի տեսքով: Բակտերիան ներթափանցում է բսիլեմային անոթներ և նվազեցնում ջրի հոսքը դեպի տերևներ, ինչի հետևանքով հյուսվածքը մահանում է: Վարակված ծառերի տերևների վրա զարնանը որևէ ախտանշան չի նկատվում, քանի որ դրանք սկսում են զարգանալ հուլիսի առաջին կեսին: Տերևների ծայրերը և եզրերը նախ դեղնում են, ապա դառնում դարչնագույն կամ շագանակագույն, իսկ առողջ ու վարակված հյուսվածքի միջև ձևավորվում է ոսկեդեղին շերտ: Վարակված տերևները չեն թառամում, բայց ի վերջո դրանց ամբողջ մակերեսը դառնում է դարչնագույն և նեկրոտիկ: Որոշ տերևներ ժամանակից շուտ են թափվում, բայց մեծ մասը մինչև վեգետացիայի ավարտը մնում է ծառի վրա: Այրվածքի ախտանշանները կարող են սկզբում դիտվել ծառի մեկ ճյուղի վրա, հետագայում տարածվել՝ վարակելով ամբողջ ծառը:

Աղյուսակ 1. Լշենու ծառերի վարակվածությունը 2022 թ. հոկտեմբերին\*

Սորտը	Հիվանդությունը	Հիվանդության հայտնաբերման հաճախականությունը, %	Տերևների վարակվածության ինտենսիվությունը, բալ	Բնի և/կամ շիվերի վարակվածության ինտենսիվությունը, բալ	Հիվանդության զարգացման աստիճանը, %
Գուարա	Ծակոտկեն բծավորություն	76	3	1	29,4
	Գոմոգ	8,5	-	1-3	3,7
Պենտա	Գոմոգ	7,1	-	1-2	2,6
	Լշենու տերևների այրվածք	18,6	2-3		15,7
Լորան			0		

\*Կազմվել է հեղինակների կողմից:

**Աղյուսակ 2.** Նշենու վնասակար օրգանիզմների տեսակային կազմը (2021-2022 թթ.)\*

Վնասակար օրգանիզմներ	Կարգաբանությունը
Կորիզավոր ծառատեսակների ծակոտկեն բծավորություն	<i>Fungi, Ascomycota, Pezizomycotina, Dothideomycetes, Dothideomycetidae, Mycosphaerellales, Mycosphaerellaceae, Stigmina, Stigmina carpophila (Lev.) M. B. Ellis</i> Յոմախիշը՝ <i>Wilsonomyces carpophilus (Léveillé) Adaskaveg, J.M. Ogawa &amp; E.E. Butler</i>
Գոմոզ՝ ցիտոսպորոզ	<i>Fungi, Dikarya, Ascomycota, Pezizomycotina, Sordariomycetes, Sordariomycetidae, Valsaceae, Cytospora, Cytospora chrysosperma Elias Magnus Fries</i>
Նշենու տերևների այրվածք	<i>Bacteria, Gammaproreobacteria, Pseudomonadota, Xanthomonadales, Xanthomonadaceae, Xylella, Xylella fastidiosa Wells et al.</i>
Նշենու փրփրանման բաղցկեղ	<i>Bacteria, Pseudomonadota, Alphaproteobacteria, Sphingomonadales, Zymomonadaceae, Zymomonas Khuyver and van Niel</i>
Զլորոզ	Երկաթի սակավություն
Շերտավոր պտղացեց	<i>Animalia, Arthropoda, Insecta, Lepidoptera, Gelechiidae, Anarsia, A. lineatella Zeller</i>
Դեղձենու կանաչ լվիճ	<i>Animalia, Arthropoda, Insecta, Hemiptera, Sternorrhyncha, Aphididae, Myzus or Myzodes, Myzus persicae Sulz.</i>

\*Կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ [www.mycobank.org](http://www.mycobank.org) կարգաբանության:

Ամբողջովին վարակված ծառի վառ դեղնավուն երանգավորմամբ պայմանավորված՝ նշենու տերևների այրվածքը անվանում են նաև «ոսկե մահ» (Ա. Ասատրյան, Գ. Ավագյան, 2022, [www.sacvalleyorchards.com](http://www.sacvalleyorchards.com)):

2022 թ. հոկտեմբերի առաջին տասնօրյակում գրանցված հիվանդությունները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Գուլարա սորտի ծառերի վրա կորիզավորների ծակոտկեն բծավորության հայտնաբերման հաճախականությունը կազմել է 76, իսկ զարգացման աստիճանը՝ 29,4 %: Գոմոզի հայտնաբերման հաճախականությունը տատանվել է 7,1-8,5, զարգացման աստիճանը՝ 2,6-3,7 % սահմաններում: Պենտա սորտի վրա նշենու տերևների այրվածքի հայտնաբերման հաճախականությունը կազմել է 18,6, զարգացման աստիճանը՝ 15,7 %: Նշենու Լորան սորտի ծառերի վրա որևէ հիվանդություն չի նկատվել:

Չարկ է նշել, որ նշենու տերևների այրվածք և փրփրանման բաղցկեղ հիվանդությունները Չայաստանում հայտնաբերվել են առաջին անգամ:

2021-2022 թթ. հետազոտությունների ընթացքում նշենու այգում գրանցված վնասակար օրգանիզմները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Նշենու այգում նկատվել են նաև շերտավոր պտղացեցի (*Anarsia lineatella Zeller (Lepidoptera: Gelechiidae)*) կողմից վնասված շիվեր, դեղձենու կանաչ լվիճով (*Myzus persicae (Sulzer) (Hemiptera: Aphididae)*) բնակեցված տերևներ: 2022 թ. գոմոզի ախտանշաններով նշենու ծառերի նմուշները ենթարկվել են լաբորատոր փորձաքննության:

յան: Չետագուոված նմուշների բնի և արմատների կեղևի վրա առկա են եղել փտման, գոմոզի, նեկրոզի ախտանշաններ, իսկ արմատների վրա՝ նաև սնկամարմնի հիֆեր (սկ. 6): Լաբորատոր փորձաքննության արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

- *Arthrimum sp./Apiospora sp.* ֆիտոպաթոգեն տեսակներն առաջացնում են նշենու տերևների անոթային խնդիրներ և նեկրոզ:

**Աղյուսակ 3.** Նշենու նմուշների լաբորատոր փորձաքննության արդյունքները\*

Ֆիտոպաթոգեն՝ բուսախտածին սնկեր	Բույսի վարակված հյուսվածքը	Ոչ ախտածին սնկեր
<i>Arthrimum sp./Apiospora sp.</i>	Բնի միջուկ	
<i>Fusarium acuminatum</i>	Կեղևի ներքին հյուսվածք	<i>Clonostachys rosea, Lachancea quebecensis, Mucor circinelloides, Pichia kudriavzevii, Torulaspora sp.</i>
<i>Fusarium incarnatum-equiseti species complex</i>		
<i>Fusarium oxysporum species complex</i>		
<i>Valsa sordida (Cytospora chrysosperma)</i>	Խեժով պատված կեղև	

\*Կազմվել է հեղինակների կողմից:

- *Fusarium acuminatum*. կարող է առաջացնել խոցեր քնի, ճյուղերի վրա:
- *Fusarium incarnatum-equiseti*. որոշ տարատեսակներ առաջացնում են նշենու պտուղների փտում:
- *Fusarium oxysporum*. որոշ տարատեսակներ կարող են առաջացնել նշենու արմատների և արմատավզիկի փտում:
- *Valsa sordida (Cytospora chrysosperma)*. սովորաբար առաջացնում է բարդու ցիտոսպորոզ, ինչի հետևանքով դիտվում է բարդիների փոքր տրամագծով ճյուղերի և բների չորացում, իսկ շատ զգայուն բուսակների դեպքում վարակման պահից 2-5 տարի անց կարող է մահանալ ամբողջ ծառը: Հիվանդության հետևանքով առաջանում են նեկրոտիկ բծեր, դիտվում են կեղևի գորշացում և շերտավորում: Ավելի բարակ ճյուղերը հաճախ չորանում են առանց ախտանշանների: Կեղևը կարող է մգանալ կամ ստանալ մոխրագույն, կարմրազազանակագույն կամ դեղնավուն երանգ:

Ինչ վերաբերում է ոչ բուսախտածին սնկերին, ապա գոյություն չունի որևէ ապացույց, որ *Lachancea quebecensis*, *Pichia kudriavzevii* և *Torulaspora sp.* սնկերը բուսախտածին ազդեցություն են գործում *Prunus* ցեղի պտղատուների վրա: Սակայն դրանք բոլորն էլ առանձնացվել և նույնականացվել են գոմոզի նշաններով նշենու բների/ճյուղերի հատվածներից:

Այսպիսով՝ գոմոզով ախտահարված նշենու քնից և ճյուղերից լաբորատոր պայմաններում առանձնացվել ու նույնականացվել է *Ascomycota* ֆիլումի *Euascomycetes* դասին պատկանող ֆիտոպաթոգեն մեկ (*Arthrimum sp./Apiospora sp.*), *Ascomycota* ֆիլումի *Sordariomycetes* դասին պատկանող չորս, այդ թվում՝ *Fusarium* ցեղին պատկանող երեք (*Fusarium acuminatum*, *F. incarnatum-equiseti species complex*, *F. oxysporum species complex*), *Valsa* ցեղին պատկանող մեկ (*Valsa sordida (Cytospora chrysosperma)*), ինչպես նաև *Ascomycota* ֆիլումի *Saccharomycetes* դասին պատկանող ոչ ֆիտոպաթոգեն երկու (*Lachancea quebecensis*, *Pichia kudriavzevii*), *Ascomycota* ֆիլումի *Sordariomycetes* դասին պատկանող ոչ ֆիտոպաթոգեն մեկ (*Clonostachys rosea*), *Zygomycota* ֆիլումի *Zygomycetes* դասին պատկանող ոչ ֆիտոպաթոգեն մեկ (*Mucor circinelloides*) սնկատեսակ:

### Եզրակացություն

2021 և 2022 թթ. հետազոտությունների ընթացքում նշենու այգում հայտնաբերվել են փոփոխման քաղցկեղ, նշենու տերևների այրվածք, կորիզավոր ծառատեսակների ծակոտկեն բծավորություն, գոմոզ, քլորոզ հիվանդությունները, ինչպես նաև շերտավոր պտղացեց, դեղձենու կանաչ լվիճ վնասատուները:

Նշենու հետազոտված երեք սորտերից Գուարա սորտի ծառերը վարակված են եղել կորիզավորների ծակոտկեն

բծավորություն և գոմոզ, Պենտա սորտի ծառերը՝ գոմոզ, նշենու տերևների այրվածք, քլորոզ հիվանդություններով: Լորան սորտի ծառերի վրա որևէ հիվանդություն չի հայտնաբերվել:

Գուարա սորտի ծառերի առավել բարձր վարակվածություն կորիզավորների ծակոտկեն բծավորությամբ գրանցվել է 2022 թ. հոկտեմբերին: Հիվանդության հայտնաբերման հաճախականությունը կազմել է 76, իսկ զարգացման աստիճանը՝ 29,4 %:

Նշենու Պենտա սորտը դիմացկուն է կորիզավորների ծակոտկեն բծավորության նկատմամբ, իսկ Գուարա սորտը՝ նշենու տերևների այրվածք հիվանդության նկատմամբ: Պենտա սորտի ծառերը Գուարա սորտի ծառերի համեմատությամբ հազվադեպ են վարակվել գոմոզով (համապատասխանաբար 7,1 և 2,6 %, 8,5 և 3,7 %): Նշենու Լորան սորտի ծառերը վեգետացիայի ողջ ընթացքում որևէ հիվանդությամբ չեն վարակվել:

Նշենու տերևների այրվածք և փոփոխման քաղցկեղ հիվանդությունները Հայաստանում հայտնաբերվել են առաջին անգամ:

Գոմոզով վարակված նշենու ծառերի լաբորատոր հետազոտության ընթացքում նմուշներից առանձնացվել և նույնականացվել են *Arthrimum sp./Apiospora sp.*, *Fusarium acuminatum*, *F. incarnatum-equiseti*, *F. oxysporum* և *Valsa sordida (Cytospora chrysosperma)* բուսախտածին, ինչպես նաև *Clonostachys rosea*, *Lachancea quebecensis*, *Mucor circinelloides*, *Pichia kudriavzevii* և *Torulaspora sp.* ոչ ախտածին սնկատեսակները:

Նշենու Պենտա սորտի ծառերի քլորոզի դեմ Rexolin Q40 տերևային սնուցման պարարտանյութով կրկնակի սրսկումը (15 օր ընդմիջումով, 1 գ/լ ծախսի նորմով) ապահովել է 100 % կենսաբանական արդյունավետություն:

### Գրականություն

1. Ասատրյան Ա., Ավագյան Գ. Պտղահատապտղատու մշակաբույսերի սերմերի և տնկանյութի փորձորոշման առանձնահատկությունները տնկարանում. - Եր., 2022. - 289 էջ:
2. Дементьева М.И. Фитопатология. - М.: Агропром, 1985. - С. 323-326.
3. Доброзракова Т.Л. Сельскохозяйственная фитопатология. - Л.: Колос, Ленинградское отделение, 1974. - С. 251-255.
4. <https://www.medicalnewstoday.com/articles/323042#six-most-healthy-nuts>. Six Most Healthy Nuts (դիտվել է՝ 10.04.2023 թ.).
5. <https://scienceagri.com/10-worlds-biggest-almond-producers/>. 10 Worlds Biggest Almond Producers (դիտվել է՝ 20.02 2023 թ.).

6. <https://studfile.net/preview/1838822/page:5/>. Методы учета болезней плодово-ягодных культур (դիտվել է՝ 22.02.2023 թ.).
7. <https://blog.praxilabs.com/2022/08/24/7-different-dna-extraction-methods/>. 7 Different DNA Extraction Methods (դիտվել է՝ 22.02.2023 թ.).
8. <http://old.minagro.am/2014/08/>. Կորիզավոր ցտղա-տեսակների հիմնական հիվանդությունները (դիտվել է՝ 18.10.2022 թ.).
9. <https://thealmonddoctor.com/foamy-canker-in-almond/>. Foamy Canker in Almond (դիտվել է՝ 30.06.2022 թ.).
10. <https://www.mycobank.org>. MYCOBANK Database (դիտվել է՝ 30.09.2022 թ.).
11. <https://web.extension.illinois.edu/focus/index.cfm?problem=chlorosis>. Illinois Extension. Plants (դիտվել է՝ 20.03.2022 թ.).
12. <https://kosagro.kz/reksolin-q40>. Минеральные удобрения и пестициды. Рексолин Q40 (դիտվել է՝ 20.07.2023 թ.).
13. <https://www.sacvalleyorchards.com/almonds/foiar-diseases/almond-leaf-scorch/>. Sacramento Valley Orchard Source. Almond Leaf Scorch (դիտվել է՝ 20.09.2022 թ.).
14. [https://vegnt.com/foods/nuts\\_almonds.html](https://vegnt.com/foods/nuts_almonds.html). Food info: Nutrients in 100 grams of Almonds. Nuts, almonds (Prunus dulcis) (դիտվել է՝ 20.09.2023 թ.).

## Болезни миндаля в условиях общины Ервандашат Армавирской области РА

**Г.В. Авагян**

*Национальный аграрный университет Армении*

**В.Г. Саакян**

*Индивидуальный предприниматель*

**Ключевые слова:** гоммоз, дырчатая пятнистость косточковых, миндаль, ожог листьев, пенообразный рак, хлороз

**А н н о т а ц и я .** В условиях общины Ервандашат РА в 2021-2022 гг. были изучены видовой состав болезней миндаля и зараженность различных сортов. Деревья сорта Гуара были заражены дырчатой пятнистостью косточковых, гоммозом и пенообразным раком, миндаль сорта Пента – гоммозом, ожогом листьев, пенообразным раком, хлорозом, а на деревьях сорта Лоран болезней не обнаружено. Заболевания ожог листьев и пенообразный рак миндаля в Армении были зарегистрированы впервые. Из зараженных гоммозом образцов был выделен и идентифицирован ряд фитопатогенных (*Arthrinium sp./Apiospora sp.*, *Fusarium acuminatum*, *F. Incarnatum-equiseti*, *F. oxysporum*, *Valsa sordida*) и непатогенных (*Clonostachys rosea*, *Lachancea quebecensis*, *Mucor circinelloides*, *Pichia kudriavzevii*, *Torulaspota sp.*) грибов.

## Almond Diseases in Conditions of Yervandashat Community of Armavir Marz in the Republic of Armenia

**G.V. Avagyan**

*Armenian National Agrarian University*

**V.G. Sahakyan**

*Private Entrepreneur*

**Keywords:** almond, almond leaf scorch, chlorosis, foamy canker, gummosis, shot hole disease

**Abstract.** As a part of the research, the species composition of almond diseases, as well as the susceptibility of different almond varieties, was studied. The following diseases and pests were detected at Armavir Marz: shot hole disease, almond leaf scorch, foamy canker, chlorosis, gummosis, peach twig borer, and green peach aphid. Trees of the Guara variety were infected with shot hole and gummosis, Penta - with gummosis, leaf scorch, and chlorosis. Diseases were not detected in trees of the Lauranne variety. Almond leaf scorch (*Xylella fastidiosa* Wells et al.) and foamy canker (*Zymomonas Kluyver* and *van Niel*) diseases were recorded in Armenia for the first time. Plant pathogenic fungi *Arthrinium sp./Apiospora sp.*, *Fusarium acuminatum*, *F. Incarnatum-equiseti*, *F. oxysporum*, *Valsa sordida* (*Cytospora chrysosperma*), as well as non-pathogenic fungi *Clonostachys rosea*, *Lachancea quebecensis*, *Mucor circinelloides*, *Pichia kudriavzevii* and *Torulaspota sp.* have been isolated and identified from almond branches and trunks infected with gummosis.

Ընդունվել է՝ 04.07.2023 թ.  
Գրայնություն է՝ 31.08.2023 թ.



**ԱՂՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**  
 Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
 AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական պարբերական  
**ISSN 2579-2822**



Կայքը՝ [anau.am/scientific-journal](http://anau.am/scientific-journal)

doi: 10.52276/25792822-2023.3-252

ՀՏԴ 635.33:632.782(479.25)

### ԿԱՂԱՄՔԻ ԶԵՑԻ ԹՐԹՈՒՐՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ.Լ. Թերլեմեզյան գ.գ.դ., Ս.Ա. Սարգսյան կ.գ.դ., Յ.Ռ. Հարությունյան գ.գ.թ., Ս.Մ. Սարգսյան գ.գ.թ.

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն

[hlt\\_arm@yahoo.com](mailto:hlt_arm@yahoo.com), [masis.sarg.arm@gmail.com](mailto:masis.sarg.arm@gmail.com), [harutyun555@gmail.com](mailto:harutyun555@gmail.com), [sonasargsyan999@gmail.com](mailto:sonasargsyan999@gmail.com)

#### Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Մ

##### Բանալի բառեր՝

բակտերիական և քիմիական միջատասպաններ, կաղամբի տնկարկներ, կաղամբի ցեց, կենսաբանական արդյունավետություն, վիճակագրական ցուցանիշներ

#### Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

2020-2022 թթ. Արմավիրի մարզի Լուկաշին համայնքի կաղամբի տնկարկներում գրանցվել է կաղամբի ցեցով բարձր բնակեցվածություն: Փորձարկված *Br* տեսակի տեղական բակտերիական միջատասպան կուլտուրային հեղուկները, առանձին և ենթամահացու խտություններով զուգակցված կիրառման դեպքում, ֆիտոֆագի I-III հասակի թրթուրների դեմ պայքարում ցուցաբերել են առևտրային լեպիդոցիդ չափանմուշային բակտերիական պատրաստուկին համարժեք կենսաբանական բարձր արդյունավետություն:

Կաղամբի ցեցի թրթուրների դեմ պայքարում առաջարկվում է առանձին կիրառել 300 մլ/ն սպոր/մլ տիտրով բակտերիական կուլտուրային հեղուկներ, համակցված՝ 150 մլ/ն սպոր/մլ տիտրով բակտերիական և քիմիական կալիպսո միջատասպանների ենթամահացու խտություններ:

#### Նախաբան

Սպիտակագլուխ կաղամբը (*Brassica capitata*) դասվում է կարևոր բանջարաբոստանային արժեքավոր մշակաբույսերի շարքին. հարուստ է ածխաջրերով, սպիտակուցներով, հանքային աղերով և վիտամիններով: Արմավիրի մարզում կաղամբի տնկարկներին ամեն տարի զգալի վնաս է հասցնում կաղամբի ցեցը, ինչի հետևանքով նվազում է բերքատվությունը, իջնում է բերքի որակը: Երբեմն, նշանակալի վնասով պայմանավորված, առաջանում է տնկարկներում վերասածիլավորման անհրաժեշտություն (Ա.Ս. Ավագյան, 2012):

Կաղամբի տերևակեր վնասատուների դեմ պայքար չիրականացնելու դեպքում մշակաբույսի ուշահաս և վաղահաս սորտերի առավելագույն բերքի կորուստը Հայաստանում

միջինը կազմում է համապատասխանաբար 52 և 80 % (Շ.Է. Շաֆարյան, 1968):

Քիմիական միջատասպանները թեև կենսաբանորեն բարձրարդյունավետ են (Հ.Լ. Թերլեմեզյան, Յ.Ռ. Հարությունյան, 2013, Հ.Լ. Թերլեմեզյան և ուրիշ., 2014), այնուամենայնիվ, մահաբեր ազդեցություն են գործում օգտակար էնտոմոֆաունայի վրա, նպաստում են ինսեկտիցիդների նկատմամբ վնասակար միջատների կայուն տեղախմբերի ձևավորմանը, որոշակի վտանգ են ներկայացնում մարդու, տաքարյուն կենդանիների և բույսերի համար (Ա.Փ. Մեքոբյան, 2011): Ուստի բույսերի պաշտպանության ինտեգրացված համակարգում նախապատվությունը տրվում է մարդու և շրջակա միջավայրի համար անվտանգ կենսաբանական եղանակով պայքարի մշակմանն ու ներդրմանը:

Միջատասպան մանրէաբանական պատրաստուկներից նախընտրելի են բյուրեղային մարմնիկներ սինթետիկ *Bacillus thuringiensis* (*Bt*) տեսակի միջատասպան բակտերիաները, որոնք տարատեսակ միջատների դեմ դրսևորում են կենսաբանական բարձր արդյունավետություն և սանիտարահիգիենիկ տեսանկյունից անվտանգ են (H.A. Caranceva, И.Ю. Бобрешова, 2006, A.P. Месропян, 2011, Ա.Մ. Ավագյան, 2012):

Խնդիր է դրվել լաբորատոր և դաշտային պայմաններում (ըստ բաժնյակային և արտադրական փորձերի) որոշել մեր կողմից մանրէաբանական եղանակով կենսացենոզի առանձին տարրերից առանձնացված *Bt* տեսակի տեղական բակտերիական միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը կաղամբի ցեցի թրթուրների դեմ:

Ազդման սպեկտրը վերջնական որոշելուց հետո առավել արդյունավետ տեղական միջատասպանները կարող են Չայաստանում կիրառվել որպես բակտերիական պատրաստուկների թողարկման հիմք:

### Նյութը և մեթոդները

Լաբորատոր և դաշտային պայմաններում գիտափորձերն իրականացվել են 2020-2022 թվականներին: Լաբորատոր հետազոտությունները կատարվել են 2020, բաժնյակային և արտադրական փորձերը՝ համապատասխանաբար 2021 (մայիսի 11) և 2022 (մայիսի 17) թվականներին Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում մշակվող գլուխ կազմավորող կաղամբի տնկարկներում:

Որպես հետազոտության նյութ են ընտրվել լեպիդոցիդ առևտրային բակտերիական պատրաստուկը (ԿՎ 3000 ԱՄ/մգ պատրաստուկային փոշում) (ՌԴ), կալիպտ քիմիական պատրաստուկը (48 % ԽԿ) (Գերմանիա), ձմեռային երկրաչափի (*Operophtera brumata* L.), լեռնային օղակավոր մետաքսագործի (*Malacosoma parallela* Stgr.) և ինձորենու ցեցի (*Malacosoma parallela* Stgr.) բնական մահով մահացած թրթուրներից մանրէաբանական եղանակով մեր կողմից առանձնացված սպոր-բյուրեղային բաղադրամասեր սինթետիկ *Bt<sub>TSH-12</sub>*, *Bt<sub>TSH-17</sub>* և *Bt<sub>TSH-33</sub>* միջատասպան շտամների հիման վրա առանձին (անջատ) թողարկված կուլտուրային հեղուկները:

Չայաստանում թույլատրվում է նշված պատրաստուկները օգտագործել ֆիտոֆագերի դեմ ([www.snund.am](http://www.snund.am)): Չետազոտության են ենթարկվել նաև կաղամբի ցեցի (*Plutella maculipennis* Curt.) I-III հասակի թրթուրները և սպիտակազուլի կաղամբի վաղահաս Իռնա սորտը:

Առանձին և համակցված կիրառմամբ բակտերիական միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը որոշվել է Աբբոտի բանաձևով (A.P. Месропян, 2011, Ա.Մ. Ավագյան, 2012):

Կուլտուրային հեղուկներից յուրաքանչյուրում կենսունակ սպորների քանակը (տիտր) կազմել է 300 մլն սպոր/մլ: Չամակցվել են կուլտուրային հեղուկի և քիմիական կալիպտ

պատրաստուկի մահացու խտությունների՝ համապատասխանաբար 2 և 10 անգամ նոսրացումները:

Որպես ստուգիչ նմուշ են ընտրվել կաղամբի ցեցով բնակեցված, բայց չցողված, իսկ որպես չափանմուշ՝ լեպիդոցիդի 0,2 %-անոց ջրային կախույթով ցողված կաղամբի բույսերը:

Լաբորատոր և բաժնյակային փորձերը կատարվել են 3-ական, արտադրական փորձերը՝ 5-ական կրկնողությամբ: Լաբորատոր փորձերի յուրաքանչյուր տարբերակում ներառվել է 30-ական թրթուր: Բաժնյակային փորձերի առանձին տարբերակի համար հատկացված տնկարկային մակերեսը կազմել է 80 մ<sup>2</sup>, աշխատանքային հեղուկի ծախսը՝ 4 լ/80 մ<sup>2</sup>, արտադրական փորձերի յուրաքանչյուր տարբերակի տնկարկային մակերեսը՝ 0,1 հա: Դաշտային պայմաններում ցողումները կատարվել են RTR MAX մակնիշի շարժիչային սրսկիչով: Աշխատանքային հեղուկի ծախսը կազմել է 500 լ/հա:

Կաղամբի տնկարկներում փորձնական տարբերակները տեղաբաշխվել են ռանդոմիզացիայի սկզբունքով:

Գիտափորձերի արդյունքները ենթարկվել են վիճակագրական վերլուծության (A.P. Месропян, 2011, Ա.Մ. Ավագյան, 2012):

Մահացած թրթուրների մարմիններում *Bt* տեսակի բակտերիական միջատասպանների առկայությունը բացահայտվել է Պետրիի թասերում պարունակվող մսապեպտոնային ազար (ՄՊԱ) սննդամիջավայրում՝ նոսրացման եղանակով (Ա.Յ. Թռչունյան և ուրիշ., 2014): Նախքան մանրէաբանական հետազոտությունները՝ մահացած թրթուրների մարմինները (որոշ խմբաբանակ) մանրացվել են հախճապակյա սանդղում և նոսրացվել մանրէազերծ ջրով: *Bt* տեսակի առանձնացված բակտերիական գաղութ ստանալու համար ՄՊԱ սննդամիջավայրում կատարվել է ցանքս 10 հազ. անգամ նոսրացված ջրային կախույթով:

Միջատասպան բակտերիաների վեգետատիվ բջիջները, բյուրեղային մարմնիկները և սպորները ներկվել են ըստ սահմանված մեթոդի (Գ.Մ. Иванов, А.Б. Гукасян, 1966):

### Արդյունքները և վերլուծությունը

Լաբորատոր պայմաններում կաղամբի ցեցի թրթուրների դեմ բակտերիական կուլտուրային հեղուկների տարբեր՝ 100-600 մլն սպոր/մլ խտությունների փորձարկմամբ պարզվել է, որ առավել արդյունավետ է նվազագույնը 300 մլն սպոր/մլ խտությունը: Այն դաշտային պայմաններում ֆիտոֆագի թրթուրների դեմ փորձարկվել է ինչպես առանձին, այնպես էլ ենթամահացու խտություններով համակցված: Բաժնյակային և արտադրական փորձերի տարբերակային սխեմաները ներկայացված են աղյուսակներ 1-2-ում:

Ըստ նախնական հաշվառման արդյունքների՝ Արմավիրի մարզի Լուկաշին համայնքում որպես բաժնյակային և արտադրական փորձատեղամասեր ընտրված կաղամբի

տնկարկների համապատասխանաբար 29 և 38 %-ը բնակեցված են եղել 2 և ավելի թրթուրներով, ինչը համապատասխան է ֆիտոֆագի տնտեսական վնասակարության շեմին (Методические указания, 2011):

Լաբորատոր գիտափորձերի արդյունքներով հաստատվել է, որ 300 մլն սպոր/մլ խտությամբ կուլտուրային հեղուկների ինչպես առանձին, այնպես էլ բակտերիական և քիմիական միջատասպանների՝ համապատասխանաբար 2 և 10 անգամ նորացումների համակցված կիրառումը կադամբի ցեցի թրթուրների դեմ ընդհանուր առմամբ ապահովել է բարձր՝ 93,3-96,7 % կենսաբանական արդյունավետություն: Կենսաբանական բարձր արդյունավետություն (92,9-95,4 %) ցողումից 7 օր անց գրանցվել է նաև բաժնյակային փորձերում:

Հաշվի առնելով ստացված տվյալները՝ բակտերիական կուլտուրային հեղուկներն առանձին և ենթամահացու խտություններով համակցված կիրառվել են կադամբի ցե-

ցի I-III հասակի թրթուրների դեմ նաև արտադրական փորձերում (մեծածավալ ցողումներ):

Ըստ աղյուսակ 1-ի՝ առանձին և համակցված կիրառման դեպքում միջատասպաններն արտադրական փորձերի ընթացքում ևս ֆիտոֆագի թրթուրների դեմ ցուցաբերել են կենսաբանական բարձր արդյունավետություն: Չափանմուշային լեպիդոցիդի 92,5 % կենսաբանական արդյունավետության համեմատությամբ առանձին բակտերիական կուլտուրային հեղուկների ցողումից 7 օր անց կենսաբանական արդյունավետությունն ընդհանուր առմամբ տատանվել է 91,7-93,1 %, համակցված ենթամահացու խտություններով միջատասպանների դեպքում՝ 90,7-91,8 %, իսկ չափանմուշային լեպիդոցիդինը կազմել է 92,5 %: Ցողման 7-րդ օրվա համեմատությամբ 3-րդ և 5-րդ օրերին կենսաբանական արդյունավետության ցուցանիշները համեմատաբար ցածր են եղել, ինչը, ըստ երևույթին, պայմանավորված է բակտերիական միջատասպանների ազդման մեխանիզմի առանձնահատկությամբ:

**Աղյուսակ 1.** Առանձին և համակցված կիրառմամբ միջատասպանների կենսաբանական արդյունավետությունը կադամբի ցեցի I-III հասակի թրթուրների դեմ պայթարում (արտադրական փորձեր, 2022 թ.)\*

Տարբերակներ	Կուլտուրային հեղուկի (մլն սպոր/մլ) և պատրաստուկի (%) խտությունները	Նախնական հաշվարկով հաստատված կենդանի թրթուրների քանակը տարբերակում, հատ	Կենսաբանական արդյունավետությունն ըստ հաշվառման օրերի, %		
			3	5	7
<i>Bt</i> <sub>TSH-12</sub>	300	58	68,0	91,4	93,1
<i>Bt</i> <sub>TSH-17</sub>	300	60	76,7	81,7	91,7
<i>Bt</i> <sub>TSH-33</sub>	300	50	74,0	86,0	92,0
<i>Bt</i> <sub>TSH-12</sub> + կալիպսո	150 + 0,033	54	64,8	77,8	90,7
<i>Bt</i> <sub>TSH-17</sub> + կալիպսո	150 + 0,033	49	71,4	83,7	91,8
<i>Bt</i> <sub>TSH-33</sub> + կալիպսո	150 + 0,033	57	63,2	84,2	91,2
Լեպիդոցիդ (չափանմուշ)	0,2	53	73,6	83,0	92,5

**Աղյուսակ 2.** Կադամբի ցեցի I-III հասակի մահացած թրթուրների միջին քանակի վիճակագրական ցուցանիշները ցողումից 10 օր անց (արտադրական փորձեր, 2022 թ.)\*

Տարբերակներ	Կրկնողություններում մահացած թրթուրների միջին քանակը, հատ	Վիճակագրական ցուցանիշներ				Ստյուդենտի <i>t</i> <sub>չափանիշ</sub> -ի հաշվարկային ցուցանիշը
		քառակուսային շեղումը	տատանման գործակիցը, %	միջին սխալը	փորձի սխալը, %	
<i>Bt</i> <sub>TSH-12</sub>	10,8	1,166	10,80	0,521	4,8	1,444
<i>Bt</i> <sub>TSH-17</sub>	11,0	0,632	5,75	0,283	2,6	2,449
<i>Bt</i> <sub>TSH-33</sub>	9,2	0,980	10,65	0,438	4,8	0,973
<i>Bt</i> <sub>TSH-12</sub> + կալիպսո	9,8	1,166	11,90	0,521	5,1	0
<i>Bt</i> <sub>TSH-17</sub> + կալիպսո	9,0	1,200	12,17	0,490	5,4	1,206
<i>Bt</i> <sub>TSH-33</sub> + կալիպսո	10,4	0,490	4,71	0,219	2,1	1,171
Լեպիդոցիդ (չափանմուշ)	9,8	0,748	7,63	0,375	3,4	-

**Ծանոթություն.** չափանմուշային լեպիդոցիդի «-» ցուցանիշը ներառված է Ստյուդենտի *t*<sub>չափանիշ</sub>-ի հաշվարկային բանաձևում,  $P_{0,95}$  և  $n=5$  դեպքում Ստյուդենտի *t*<sub>չափանիշ</sub>-ի աղյուսակային ցուցիչը կազմում է 2,571:

\*Կազմվել է հեղինակների կողմից:

Յատկանշական է, որ մահացած թրթուրները չափերով փոքրացել են և գորշացել: Դրանց մարմինների լաբորատոր հետազոտությամբ հաստատվել է, որ ցեցի մարմնի քայքայված հյուսվածքները պարունակել են միջատասպան սպոր-քյուրեղային բաղադրամասեր, ինչը նշանակում է, որ ֆիտոֆագի թրթուրների մահացածությունը փորձարկված միջատասպանների ազդեցության արդյունք է:

Աղյուսակ 2-ում ներկայացված տատանման գործակցի և փորձի սխալի ցուցանիշների՝ համապատասխանաբար 4,71-12,17 և 2,1-5,4 % սահմաններում տատանումը փաստում է, որ գիտափորձերի արդյունքները ստույգ են:

$P_{0,95}$  և  $n=5$  դեպքում Ստյուդենտի  $t_{\text{չափանիշ}}$ -ի հաշվարկային ցուցանիշները փորձարկված տարբերակներում ընդհանուր առմամբ տատանվում են 0-2,449 սահմանում և փոքր են Ստյուդենտի  $t_{\text{չափանիշ}}$ -ի արյուսակային 2,571 ցուցիչից, ինչը փաստում է, որ փորձնական (առանձին և համակցված կիրառման) և չափանմուշային տարբերակներում գրանցված կենսաբանական արդյունավետության ցուցանիշների միջև գոյություն չունի հավաստի տարբերություն:

**Եզրակացություն**

Կաղամբի ցեցի թրթուրների դեմ պայքարում բարձր արդյունավետություն են ապահովում կենսացենոզի առանձին տարրերից մեր կողմից մանրէաբանական եղանակով առանձնացված *Bt* տեսակի բակտերիական միջատասպանները:

Գիտափորձերում թրթուրների մահացածությունն առանձին և համակցված կիրառմամբ *Bt* տեսակի կուլտուրային հեղուկների ազդեցության արդյունք է:

Վիճակագրական վերլուծությամբ հիմնավորվել է, որ գիտափորձերի արդյունքները ստույգ են:

Կաղամբի ցեցի թրթուրների դեմ պայքարում առաջարկվում է առանձին կիրառել մահացու խտությամբ՝ 300 մլն սպոր/մլ տիտրով բակտերիական կուլտուրային հեղուկներ, համակցված՝ 150 մլն սպոր/մլ տիտրով բակտերիական և քիմիական կալիպսո (0,033 %-անոց ջրային կախույթ) միջատասպանների ենթամահացու խտություններ:

**Գրականություն**

1. Ավագյան Ա.Ս. Կաղամբի տերևակեր գլխավոր վնասատուների դեմ էկոլոգիական սկզբունքով

պայքարի մշակում Լոռու մարզի պայմաններում: Ատենախոս. ... կենս. գիտ. թեկն. - Եր., 2012. - 37 էջ:

2. Թերլեմեզյան Յ.Լ., Յարությունյան Յ.Ռ. Նորագույն միջատասպանների փորձարկման արդյունքները տանձենու սովորական տերևալվիկի (*Psylla piri* L.) դեմ Արարատյան հարթավայրի պայմաններում // Ագրոգիտություն. - Եր., 2013. - N 3-4. - էջ 20:

3. Թերլեմեզյան Յ.Լ., Սարգսյան Մ.Ա., Կարապետյան Գ.Ա. Միջատասպանների առանձին և ինտեգրացման եղանակով փորձարկումը արևելյան պտղակերի դեմ Արարատյան հարթավայրի դեղձենու այգիներում // Ագրոգիտություն. - Եր., 2014. - N 11-12. - էջ 576-579:

4. Թռչունյան Ա.Յ., Փանոսյան Յ.Յ., Բազուկյան Ի.Լ., Մարգարյան Ա.Ա., Պոպով Յու.Գ. Մանրէաբանական լաբորատոր աշխատանքներ: Ուսումնամեթոդական ձեռնարկ. - Եր.: ԵՊՀ, 2014. - 314 էջ:

5. Иванов Г.М., Гукасян А.Б. Окраска кристаллов и вегетативных клеток энтомопатогенных бактерий // Микробиология. - 1966. - Вып. 1. - С. 179-180.

6. Месропян А.Р. Влияние БТБ и лепидоцида на микрофлору и ферментативную активность облесенных типичных черноземов. Автореф. .... дисс. канд. биол. наук. - Ер., 2011. - 24 с.

7. Методические указания. Экономические пороги вредоносности насекомых и сорных растений по дисциплине “Химические средства защиты растений”. - СПб, 2011. - С. 15.

8. Саранцева Н.А., Бобрешова И.Ю. Биопрепараты против колорадского жука // Защита и карантин растений. - М., 2006. - N 7. - С. 27-28.

9. Сафарян С.Е. Вредная фауна капусты в Армении и биологические основы разработки мер борьбы. Автореф. ... дисс. канд. с-х наук. - Ер., 1968. - 30 с.

10. <https://snund.am/hy/page/permitted-chemical-and-biological-plant-protection-products/128>. Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական թույլատրված միջոցներ. անվանացանկ Չայաստանի Յանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների (դիտվել է՝ 25.02. 2023 թ.):

## Разработка мероприятий по борьбе с гусеницами капустной моли в условиях Армавирской области

Г.Л. Терлемезян, М.А. Саркисян, А.Р. Арутюнян, С.М. Саркисян

Научный центр оценки и анализа рисков в области безопасности пищевой продукции

**Ключевые слова:** бактериальные и химические инсектициды, биологическая эффективность, капустная моль, капустные насаждения, статистические показатели

**Аннотация.** В 2020-2022 гг. была отмечена высокая заселенность капустных насаждений общины Лукашин Армавирской области гусеницами капустной моли. Испытанные местные бактериальные культуральные жидкости штаммов *Bt*, при использовании отдельно и в комбинации с сублетальными дозами инсектицидов, проявили высокую биологическую эффективность против гусениц фитофага I-III возрастов, эквивалентную воздействию коммерческого эталонного бактериального препарата "Лепидоцид".

При борьбе с гусеницами капустной моли предлагается применять бактериальные культуральные жидкости с титром 300 млн спор/мл в отдельности, а также сочетание сублетальных концентраций бактериальной жидкости с титром 150 млн спор/мл и химического инсектицида "Калипсо".

## Development of Protective Measures against Cabbage Moth Caterpillars in conditions of Armavir Region

H.L. Terlemezyan, M.A. Sargsyan, H.R. Harutyunyan, S.M. Sargsyan

Scientific Center for Risk Assessment and Analysis in Food Safety Area

**Keywords:** bacterial and chemical insecticides, biological effectiveness, cabbage moth, cabbage plantations, statistical indicators

**Abstract.** Scientific research was conducted from 2020 to 2022 under laboratory conditions and on cabbage plantations (plot and industrial). It has been confirmed that cabbage plantations in the Lukashin community of the Armavir region had a high population of cabbage moth caterpillars. Local bacterial cultural liquids of *Bacillus thuringiensis* species tested separately and in combination with sublethal doses of insecticides showed high biological effectiveness against phytophagous caterpillars of ages I-III, which does not differ significantly from the reference indicator: commercial bacterial preparation *Lepidocide*.

According to the results of laboratory examination of the bodies of the deceased larvae, it was found out that the decomposing body tissues of the pest larvae were filled with insecticidal sporocrystalline components, which confirmed that the death of the phytophagous larvae is the result of the effect of the tested insecticides. When struggling against cabbage moth caterpillars, it is proposed to use bacterial culture fluids alone with a lethal dose of 300 million spores/ml and in combinations with their sub-lethal quantity (titer of 150 million spores/ml) with the chemical insecticide calypso (0.033 % suspension).

Ընդունվել է՝ 01.03.2023 թ.  
Գրախոսվել է՝ 14.04.2023 թ.



**ԱՂՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**  
Հայաստանի ազգային ագրարային համալսարան  
AGRICULTURE AND TECHNOLOGY    АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ

Միջազգային գիտական  
պարբերական

**ISSN 2579-2822**



Կայքէջ՝ [anau.am/scientific-journal](http://anau.am/scientific-journal)

doi: [10.52276/25792822-2023.3-257](https://doi.org/10.52276/25792822-2023.3-257)

ՀՏԴ 636.7:619:616.98:579.841.93(479.25)

## ԲՐՈՒՑԵԼՈՉԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆ ԲԱՂԱՔԻ ԹԱՓԱՌՈՂ ՇՆԵՐԻ ԴՈՊՈՒԼՅԱՑԻԱՅՈՒՄ

Հ.Մ. Դանեյան

ՀՀ ՍԱՏՍ Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն

[hrantdanelyanedp@gmail.com](mailto:hrantdanelyanedp@gmail.com)

### Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Մ

#### Բանալի բառեր՝

ախտորոշում,  
բրուցելոզ,  
համաճարակաբանական շղթա,  
շճաբանական թեստեր,  
շուն

### Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Մեր կողմից կատարվել են Երևան քաղաքի թափառող շների պոպուլյացիայում բրուցելոզի տարածվածության հետազոտություններ և կիրառված շճաբանական թեստերի համեմատական վերլուծություն:

Բրուցելաների *B. abortus*, *B. melitensis*, *B. suis* տեսակներով պայմանավորված բրուցելոզի դեպքերը փաստում են, որ անհրաժեշտ է հետազոտություններ իրականացնել հատկապես գյուղատնտեսական կենդանիների շրջանում բրուցելոզի բարձր տարածվածություն գրանցված մարզերում, ինչը հնարավորություն կտա վերանայել և փոփոխության ենթարկել բրուցելոզի դեմ պայքարի ռազմավարությունը:

### Նախաբան

Բրուցելոզը *Brucellaceae* ընտանիքին պատկանող փոքր, միջբջջային, գրամ բացասական, ֆակուլտատիվ աերոբ կոկոբացիլների՝ *Brucella*-ների կողմից հարուցված անբուժելի, զոոնոզ հիվանդություն է, որը հիմնական տեր հանդիսացող ընկալունակ կենդանատեսակների մոտ առաջացնում է վիժումներ և վերարտադրողական ֆունկցիայի խանգարումներ (Głowacka, et al., 2018):

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) դիտարկմամբ բրուցելոզը ողջ աշխարհում գերակա հիմնախնդիր է: Այն լայնորեն տարածված է Հարավային Ամերիկայի, Կենտրոնական Ասիայի, Միջերկրածովյան և Մերձավոր Արևելքի զարգացող երկրներում (WHO, 2021):

Հիվանդության տարածմանը նպաստում են կենդանիների առողջության պահպանման կանոնակարգերի բացա-

կայությունը և ոչ թույլատրելի պայմաններում հում կաթ-նամթերքի զանգվածային օգտագործումը (Głowacka, et al., 2018, Rubach, et al., 2013):

Բրուցելոզի հարուցիչ 12 տեսակները դասակարգված և խմբավորված են ըստ Նախընտրելի/հիմնական տիրոջ՝ *B. abortus* (խոշոր եղջերավոր կենդանիներ), *B. ovis* (մանր եղջերավոր կենդանիներ), *B. melitensis* (հիմնականում ոչխարներ և այծեր), *B. suis* (խոզեր), *B. canis* (շնագզիներ), *B. inopinata* (մարդ), *B. neotomae* (տափաստանային առնետներ), *B. microti* (դաշտամկներ), *B. pinnipedialis* և *B. ceti* (ծովային կաթնատուներ), *B. vulpis* (կարմիր աղվեսներ), *B. papionis* (ոչ մարդասման պրիմատներ) (de Figueiredo, et al., 2015, Hull and Schumaker, 2018):

Կաթնատուների միջև վարակումը տեղի է ունենում լորձաթաղանթի միջոցով՝ վարակված կենդանիների արտազատուկների (կաթ, շնչառական և սեռական ուղիների

արտագատուկներ, մեզ, թուք) հետ շփման արդյունքում (Hensel, et al., 2018): Բրուցելաների տարբերակումը հիմնականում կատարվում է ըստ շտամի տեսակի, որը կարող է լինել հարթ և անհարթ: Ընտանի կենդանիների պոպուլյացիաներն ախտահարող *B. abortus*, *B. suis*, *B. melitensis* և *B. canis* բրուցելաները զոռնոզ են, որոնք, բացի *B. canis*-ից, դասակարգված են որպես հարթ շտամներ (Mancilla, 2015):

Շների մոտ բրուցելոզի առաջացումը պայմանավորված է *B. canis*-ի անհարթ տեսակներով: *B. canis*-ը, որպես հարուցիչ առանձին տեսակ, առաջին անգամ գրանցվել է 1966 թվականին (Carmichael and Kenney, 1968): Հետագայում աշխարհում հիվանդության դեպքեր սկսել են գրանցվել տոհմային և կոմերցիոն շնաբուծարաններում (Kaden, et al., 2014):

Ամերիկյան, Ասիական և Աֆրիկյան բազմաթիվ երկրներ դիտարկվում են որպես շների մոտ բրուցելոզի նկատմամբ էնդեմիկ տարածքներ (Wanke, 2004): Այդ երկրներում շները, առանց բրուցելոզի նկատմամբ հետազոտվելու, կարող են տեղափոխվել և պահվել տարբեր կացարաններում, ինսամակալության վերցվել և պահվել տներում, ինչի արդյունքում մեծանում է մարդկանց շրջանում բրուցելոզի տարածման հավանականությունը (Hensel, et al., 2018):

Շատ երկրներում չի պահանջվում նախքան ինսամակալության վերցնելը կենդանիներին բրուցելոզի նկատմամբ պարտադիր հետազոտել, ինչպես նաև չեն գործում ախտորոշման համապատասխան կանոնակարգեր (Simmon and Hoffman, 2016):

Հարկ է նշել, որ աշխարհում գրանցվել են նաև շների վարակվածության դեպքեր, որոնք պայմանավորված են եղել բրուցելաների հարթ տեսակներով (*B. suis*, *B. melitensis* և *B. abortus*) (Mor, et al., 2016, Wareth, 2018): Որոշ երկրներում *B. suis*-ն էնդեմիկ է վայրի խոզերի պոպուլյացիաներում: Ընդ որում՝ ապացուցված է այդ երկրներում դրական կոռեկցիան վայրի խոզերի և շների, մասնավորապես որսորդության մեջ ներգրավված առանձնյակների մոտ գրանցված *B. suis*-ի դեպքերի միջև (Pedersen, et al., 2014):

Հայաստանում բրուցելոզն առավել տարածված զոռնոզ հիվանդություններից է. մարդկանց մոտ տարեկան գրանցվում է հիվանդության ավելի քան 300 դեպք (NCDC): Գյուղատնտեսական կենդանիների շրջանում բրուցելոզը վերահսկվում է թեստ-սպանոլ մոտեցման հիման վրա և իրականացվում է միայն խոշոր ու մանր եղջերավոր կենդանիների պոպուլյացիաներում: Մյուս կենդանատեսակները, այդ թվում՝ խոզերը և շները, ներառված չեն այդ միջոցառումներում: Վերջին տարիներին բրուցելոզի դեպքերի ավելացումը փաստում է այն մասին, որ հիվանդության տարածման սահմանափակման նպատակով անհրաժեշտ է ընդլայնել բրուցելաների բոլոր տեսակների, ինչպես նաև բրուցելոզի կայուն համաճարակաբանական շղթայում, որպես հարուցիչ աղբյուր, հավանական բոլոր կենդանատես-

ակների հայտնաբերման հնարավորությունները: Բրուցելոզի համաճարակաբանության ամբողջական պատկերը հստակեցնելու, արդյունավետ ռազմավարություն մշակելու և ներդնելու համար անհրաժեշտ է իրականացնել լրացուցիչ հետազոտություններ:

Բրուցելոզի համաճարակաբանական շղթայում թափառող շների դերը պարզելու, բրուցելաների շրջանառվող տեսակների վերաբերյալ որոշակի տվյալներ ստանալու համար մեր կողմից իրականացվել են Երևան քաղաքի թափառող շների պոպուլյացիայում բրուցելոզի նկատմամբ սկրինինգ հետազոտություններ:

### Նյութը և մեթոդները

Հետազոտություններն իրականացվել են 2021 թ. դեկտեմբերից մինչև 2022 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածում: Նմուշների ընտրանքի չափի հաշվարկը կատարվել է առցանց հաշվիչի՝ [www.calculator.net](http://www.calculator.net) կիրառմամբ:

